

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՔԻՄԻԱ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր արտահայտությունը *ճիշտ չէ* զանգվածի պահպանման օրենքի վերաբերյալ.

- 1) սկզբնանյութերի ընդհանուր զանգվածը հավասար է վերջանյութերի ընդհանուր զանգվածին
- 2) քիմիական ռեակցիաների հավասարումների կազմումը հիմնված է զանգվածի պահպանման օրենքի վրա
- 3) սկզբնանյութերի նյութաքանակների գումարը հավասար է վերջանյութերի նյութաքանակների գումարին
- 4) օրենքը հայտնագործել են Լոմոնոսովը և Լավուազիեն

2 Քանի՞ թափուր օրբիտալ է առկա 14 կարգաթվով հիմնական վիճակում գտնվող տարրի ատոմի երրորդ էներգիական մակարդակում.

- 1) 14
- 2) 4
- 3) 8
- 4) 6

3 Ո՞րն է խմբի համարի ֆիզիկական իմաստը.

- 1) վալենտային էլեկտրոնների թիվն է
- 2) էլեկտրոնային շերտերի թիվն է ատոմի էլեկտրոնային թաղանթում
- 3) պրոտոնների թիվն է ատոմի միջուկում
- 4) պրոտոնների և նեյտրոնների գումարային թիվն է ատոմի միջուկում

4 Ո՞ր մեծությունն է նույնը հետևյալ մասնիկներում՝ Kr, Rb⁺ և Br⁻.

- 1) պրոտոնների թիվը
- 2) զանգվածային թիվը
- 3) նեյտրոնների թիվը
- 4) էլեկտրոնների թիվը

5 Ինչպե՞ս է փոխվում թթուների ուժը հետևյալ՝ H₂S – H₂Se – H₂Te շարքում.

- 1) մեծանում է
- 2) փոքրանում է
- 3) չի փոխվում
- 4) մեծանում, հետո փոքրանում

6

Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը նրա մոլեկուլում առկա կովալենտային կապերի թվի և մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում պատկերված չընդհանրացված էլեկտրոնային զույգերի թվի հետ.

Քիմիական բանաձև	Կապերի թիվ	Էլեկտրոնային զույգերի թիվ
ա) CH ₄	1) 4	Ա) 1
բ) H ₂ O ₂	2) 3	Բ) 2
գ) NH ₃	3) 2	Գ) 3
	4) 1	Դ) 4
		Ե) 0

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1Դ, բ2Դ, գ3Գ
- 2) ա1Ե, բ1Դ, գ2Ա
- 3) ա1Ե, բ2Դ, գ2Ա
- 4) ա4Ե, բ2Դ, գ2Բ

7

Ո՞ր շարքի բոլոր իոնները կարելի է նստվածքի ձևով հեռացնել լուծույթից.

- 1) SO₄²⁻, Ag⁺, S²⁻
- 2) Cl⁻, NO₃⁻, OH⁻
- 3) Cu²⁺, Cl⁻, NO₂⁻
- 4) Na⁺, NO₃⁻, Al³⁺

8

Ո՞ր նյութի լուծույթի և Fe₂O₃-ի միջև փոխազդեցությունը չի արտահայտվի Fe₂O₃ + 6H⁺ = 2Fe³⁺ + 3H₂O կրճատ իոնային հավասարման օգնությամբ.

- 1) HNO₃
- 2) HCl
- 3) H₂SO₄
- 4) CH₃COOH

9

Ո՞ր զույգ միացությունների մոլեկուլում ազոտ տարրն ունի նույն օքսիդացման աստիճանը.

- 1) NH₃, N₂O₃
- 2) HNO₂, Li₃N
- 3) Mg₃N₂, NH₃
- 4) NH₃, HNO₂

10

Ո՞ր նյութի մոլեկուլում է առկա դոնորակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապ.

- 1) ամոնիակի
- 2) ամոնիումի հիդրօքսիդի
- 3) ծծմբաջրածնի
- 4) էթանի

11

Ո՞ր պայմանի փոփոխությունը $H_{2(g)} + I_{2(g)} \rightleftharpoons 2HI_{(g)}$ համակարգում հավասարակշռության տեղաշարժ չի առաջացնի.

- 1) ճնշման մեծացումը
- 2) ջրածնի կոնցենտրացիայի մեծացումը
- 3) յոդի կոնցենտրացիայի փոքրացումը
- 4) յոդաջրածնի կոնցենտրացիայի մեծացումը

12

Ո՞ր գույգ աղերի լուծույթներում լակմուսի գույնը չի փոխվի.





- 1) NH_4NO_3 , CH_3COONa
- 2) Na_2CO_3 , $CuSO_4$
- 3) K_2SO_4 , $NaNO_3$
- 4) Na_2S , $AgNO_3$

13

Ինչպե՞ս կփոխվի $Cu + Cl_2 = CuCl_2$ ռեակցիայի արագությունը ճնշումը երկու անգամ մեծացնելիս.

- 1) կմեծանա չորս անգամ
- 2) կմեծանա երկու անգամ
- 3) կփոքրանա երկու անգամ
- 4) կփոքրանա չորս անգամ

(14-15) Տրված են հետևյալ ռեակցիաների հավասարումների ուրվագրերը.



14

Ո՞ր ռեակցիան չի արագանա թթվածնի կոնցենտրացիան մեծացնելիս.

- 1) ա
- 2) բ
- 3) դ
- 4) գ


15 Ո՞րն է ներմուլեկուլային վերօքս ռեակցիայի հավասարման ուրվագիրը.

- 1) ա
- 2) բ
- 3) գ
- 4) դ

16 2 մոլ քանակությամբ ո՞ր նյութի դիսոցումից են առաջանում *առավել քիչ* քանակությամբ PO_4^{3-} իոններ.

- 1) NaH_2PO_4
- 2) H_3PO_4
- 3) Na_3PO_4
- 4) Na_2HPO_4

17 Քանի՞ մոլ էլեկտրոն է մասնակցում մեկ մոլ օքսիդիչի վերականգնմանը՝ ըստ հետևյալ ուրվագրով վերօքս ռեակցիայի.



- 1) 5
- 2) 4
- 3) 10
- 4) 3

18 Ո՞ր հատկությունն է բնորոշ ատոմային բյուրեղավանդակով քիմիական միացություններին.

- 1) փափկություն և հալման ցածր ջերմաստիճան
- 2) կարծրություն և հալման ցածր ջերմաստիճան
- 3) փափկություն և հալման բարձր ջերմաստիճան
- 4) կարծրություն և հալման բարձր ջերմաստիճան

19

Համապատասխանեցրե՛ք հետևյալ նյութերի բանաձևերը, այդ նյութերի էլեկտրոլիզի կաթոդային վերականգնման հավասարման և անոդի վրա անջատվող նյութի բանաձևի հետ.

Էլեկտրոլիզվող նյութի բանաձև	Կաթոդային վերականգնման հավասարում	Անոդի վրա անջատվող նյութի բանաձև
ա) CuCl_2 (հալույթ)	1) $\text{Cu}^{2+} + 2\bar{e} = \text{Cu}$	Ա) H_2
բ) Na_2SO_4 (լուծույթ)	2) $2\text{H}^+ + 2\bar{e} = \text{H}_2$	Բ) Cl_2 և O_2
գ) NaCl (հալույթ)	3) $\text{Na}^+ + 1\bar{e} = \text{Na}$	Գ) Cl_2
դ) CuSO_4 (լուծույթ)	4) $2\text{H}_2\text{O} + 2\bar{e} = \text{H}_2 + 2\text{OH}^-$	Դ) O_2

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1Գ, բ4Դ, գ3Բ, դ1Դ
- 2) ա2Բ, բ2Ա, գ3Գ, դ4Ա
- 3) ա1Գ, բ4Դ, գ3Գ, դ1Դ
- 4) ա1Գ, բ2Դ, գ3Գ, դ1Դ

20

Ո՞ր նյութերի փոխազդեցությունից կարող են գոյանալ թթու աղեր.

- | | |
|--|---|
| ա) KOH և SO_2 (ավելցուկ) | գ) 0,1 մոլ NaOH և 0,2 մոլ SO_2 |
| բ) SO_2 և $\text{Ba}(\text{OH})_2$ (ավելցուկ) | դ) 0,1 մոլ P_2O_5 և 3 մոլ NaOH |

- 1) ա, բ
- 2) ա, գ
- 3) բ, գ
- 4) բ, դ

(21-22) Տրված են հետևյալ աղերը.

- | | | | |
|--------------------|--------------------|--------------------------------|------------------|
| ա) CaCl_2 | բ) MgSO_4 | գ) $\text{Ca}(\text{HCO}_3)_2$ | դ) NaCl |
|--------------------|--------------------|--------------------------------|------------------|

21

Ո՞ր աղով է պայմանավորված ջրի ժամանակավոր կոշտությունը.

- 1) ա
- 2) բ
- 3) գ
- 4) դ

22

Ի՞նչ զանգվածով (մգ) նստվածք կառաջանա մեկ լիտրում 40 մգ կալցիումի իոններ պարունակող ժամանակավոր կոշտություն ունեցող 8 լ ջուրը եռացնելիս.

- 1) 50
- 2) 800
- 3) 300
- 4) 405

23 Հետևյալ նյութերից որո՞նց հետ կարող է փոխազդել կալցիումը.

- | | | |
|-----------|---------------|--------|
| ա) H_2 | գ) S | ե) HCl |
| բ) H_2O | դ) $Ca(OH)_2$ | զ) CO |

- 1) ա, բ, գ, դ
- 2) բ, գ, զ
- 3) ա, բ, գ, ե
- 4) գ, դ, ե

24 Հետևյալ նյութերից որո՞նք են փոխազդում նատրիումի հիդրօքսիդի հետ՝ երկու տարբեր թթուների աղեր առաջացնելով.

- | | | |
|-----------|-----------|------------|
| ա) Cl_2 | գ) NO_2 | ե) CO |
| բ) CO_2 | դ) N_2O | զ) SiO_2 |

- 1) ա, գ
- 2) գ, դ
- 3) ե, զ
- 4) ա, բ

25 Ո՞ր շարք են ներառված $Fe_2O_3 \rightarrow Fe \rightarrow FeCl_2 \rightarrow FeCl_3 \rightarrow Fe(OH)_3$ փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ ազդանյութերի բանաձևերի ճիշտ հաջորդականությունը.

- 1) $H_2, Cl_2, HCl, Cu(OH)_2$
- 2) $H_2, HCl, Cl_2, Ba(OH)_2$
- 3) $Cu, Cl_2, HCl, NaOH$
- 4) $Cu, HCl, Cl_2, Mg(OH)_2$

26 Նշված նյութերի ո՞ր շարքում է ջրային լուծույթների միջավայրը համապատասխանաբար թթվային, հիմնային, թթվային.

- 1) $NaClO_3, Na_3AsO_4, (NH_4)_2SO_4$
- 2) $ZnSO_4, CuBr_2, AlCl_3$
- 3) $Fe(NO_3)_3, K_2CO_3, NaHSO_4$
- 4) $Al_2(SO_4)_3, Na_2CO_3, LiCN$

27

Ո՞ր պնդումներն են ճիշտ քլորաջրածնի վերաբերյալ.

- ա) սուր հոտով հեղձուցիչ գազ է
- բ) օդից ծանր է 2,5 անգամ
- գ) ստացվում է կերակրի աղի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից
- դ) փոխազդում է սնդիկի հետ

- 1) ա, գ
- 2) բ, գ
- 3) գ, դ
- 4) ա, բ

28

Ո՞ր ռեակցիայում է SO_2 -ը ցուցաբերում վերականգնիչ հատկություն.

- 1) $\text{SO}_2 + \text{Na}_2\text{SO}_3 + \text{H}_2\text{O} = 2\text{NaHSO}_3$
- 2) $\text{SO}_2 + \text{Cl}_2 + 2\text{H}_2\text{O} = \text{H}_2\text{SO}_4 + 2\text{HCl}$
- 3) $\text{SO}_2 + 2\text{CO} = \text{S} + 2\text{CO}_2$
- 4) $\text{SO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 = \text{Na}_2\text{SO}_3 + \text{CO}_2$

(29-30) Տրված են հետևյալ ռեակցիաների հավասարումների ձախ մասերի ուրվագրերը.



29

Ո՞րն է արտադրության մեջ ազոտական թթվի ստացման ռեակցիայի հավասարման ձախ մասի ուրվագիրը.

- 1) ա
- 2) բ
- 3) գ
- 4) դ

30

Ո՞ր դեպքերում օքսիդի լուծումը ջրում չի ուղեկցվի ազոտի օքսիդացման աստիճանի փոփոխությամբ.

- 1) բ, գ
- 2) ա, գ
- 3) բ, դ
- 4) ա, դ

31 Հետևյալ նյութերից որո՞նք կարող են լինել A-ն և B-ն՝ ըստ $A + O_2 \rightarrow B + H_2O$ ուրվագրի, եթե A գազային նյութի խտությունը հավասար է թթվածնի խտությանը.

- 1) SiH₄, Si
- 2) SiH₄, SiO₂
- 3) H₂S, SO₂
- 4) CH₄, CO₂

32 Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի անվանումը, հավասարման ձախ մասի ուրվագիրը և օրգանական վերջանյութի դասը.

Անվանում	Հավասարում	Դաս
ա) հիդրատացում բ) հիդրում գ) դեհիդրոհալոգենացում դ) դեհալոգենացում	1) $CH_3-CH=CH_2 + H_2O \xrightarrow{H^+}$ 2) $CH_3-CH=CH_2 + H_2 \xrightarrow{Pt}$ 3) $\begin{array}{c} H_3C \qquad CH_3 \\ \diagdown \quad / \\ CH-CH \\ / \quad \backslash \\ Br \qquad Br \end{array} + Zn \longrightarrow$ 4) $CH_3CH_2CH_2Cl + KOH_{(սպիրտ)} \rightarrow$ 5) $C_2H_6 + Cl_2 \xrightarrow{h\nu}$	Ա) ցիկլոալկան Բ) ալկեն Գ) ալկան Դ) սպիրտ Ե) ալկիլհալոգենիդ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1Դ, բ2Ա, գ5Ե, դ3Բ
- 2) ա1Դ, բ2Գ, գ4Բ, դ5Ե
- 3) ա2Ա, բ2Գ, գ4Բ, դ3Բ
- 4) ա1Դ, բ2Գ, գ4Բ, դ3Բ

33 Էթինի, պրոպանի և 2-բութենի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի a է: Արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթի միջով անցկացնելուց հետո խառնուրդի խտությունն ըստ ջրածնի դարձավ b: Ո՞րն է a-ի և b-ի ճիշտ փոխհարաբերությունը.

- 1) a < b
- 2) a > b
- 3) a = b
- 4) a >> b


34 Հեքսանի n° ը իզոմերն է լուսավորման պայմաններում քլորի հետ փոխազդելիս առաջացնում միայն երկու միաքլորածանցյալ.

- 1) 3-մեթիլպենտան
- 2) 2,3-երկմեթիլբութան
- 3) 2-մեթիլպենտան
- 4) 2,2-երկմեթիլբութան

35 Քանի՞ գ.ա.մ-ով է վալերիանաթթվի մեկ մոլեկուլի զանգվածը մեծ կարագաթթվի մեկ մոլեկուլի զանգվածից.

- 1) 14
- 2) 13
- 3) 12
- 4) 16

36 Ո՞ր շարքում են X_1 , X_2 , X_3 օրգանական միացությունների անվանումները՝ ըստ հետևյալ փոխարկումների շղթայի.



- 1) էթան, քլորէթան, էթանոլ
- 2) էթանոլ, քացախաթթու, քացախաթթվի էթիլէսթեր
- 3) էթիլեն, ացետալդեհիդ, քացախաթթու
- 4) ացետիլեն, ացետալդեհիդ, էթանոլ

37 Ո՞րն է արոմատիկ ածխաջրածնի քիմիական բանաձևը, եթե դրանում sp^2 և sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների քանակների հարաբերությունը 3 : 1 է.

- 1) C_6H_6
- 2) C_7H_8
- 3) C_8H_{10}
- 4) C_9H_{12}

(38-39) Քաղցրահամ, ջրում լավ լուծվող, սպիտակ, բյուրեղային A նյութի հիդրոլիզից առաջանում են միննույն հարաբերական մոլեկուլային զանգված ունեցող B և C նյութերը: B նյութի համար բնորոշ է արծաթահայելու ռեակցիան, որի ընթացքում այն փոխարկվում է D նյութի:

38 Ո՞ր շարք են ներառված համապատասխանաբար A, B, C, D նյութերի անունները.

- 1) սախարոզ, α -գլյուկոզ, β -գլյուկոզ, սորբիտ
- 2) մալթոզ, α -գլյուկոզ, β -ֆրուկտոզ, գլյուկոնաթթու
- 3) օսլա, β -գլյուկոզ, α -գլյուկոզ, սորբիտ
- 4) սախարոզ, α -գլյուկոզ, β -ֆրուկտոզ, գլյուկոնաթթու

39 Որքա՞ն է թթվածին տարրի ատոմների մոլային բաժինը D նյութում.

- 1) 0,28
- 2) 0,24
- 3) 0,25
- 4) 0,23

40 Ո՞ր շարքի նյութերն են դասավորված ըստ հիմնային հատկությունների ուժեղացման.

- 1) NH_3 , CH_3NH_2 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$
- 2) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3 , CH_3NH_2
- 3) CH_3NH_2 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, NH_3
- 4) CH_3NH_2 , NH_3 , $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$

41 Որքա՞ն է R տարրի բարձրագույն օքսիդի մոլային զանգվածը (գ/մոլ), եթե հայտնի է, որ այդ օքսիդի 1 մոլեկուլում թթվածին տարրի զանգվածը 48 գ.ա.մ.-ով փոքր է R տարրի զանգվածից, իսկ ցնդող ջրածնային միացությունն ունի HR բանաձևը:

42

6 մոլ ծծմբի(IV) օքսիդի և 5,5 մոլ թթվածնի խառնուրդը տաք կատալիզորդի վրայով անցկացնելիս առաջացել է 3 մոլ ծծմբի(VI) օքսիդ: Որքա՞ն է ծծմբի(VI) օքսիդի ծավալային բաժինը (%) ստացված գազային խառնուրդում:

43

H–H քիմիական կապի էներգիան $7 \cdot 10^{-19}$ Ջ է: Որքա՞ն է ատոմներից 40 գ ջրածին ստանալիս անջատվող ջերմությունը (կՋ):

44

Որքա՞ն է $A + 2B = D$ ռեակցիայի արագությունը (մոլ/լ·ր) ըստ A նյութի սպառման, եթե 10 րոպեի ընթացքում B նյութի քանակը 10 մլ ծավալով ռեակցիոն խառնուրդում պակասել է 0,6 մոլ–ով:

45

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական կապերի և մոլեկուլի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) Կովալենտային կապը ուղղորդված է:
- 2) SiO_2 , NaCl , Cl_2 , K_2SO_4 , CO_2 միացությունների մոլեկուլներում առկա են միայն կովալենտային կապեր:
- 3) Իոնային կապը հագեցված չէ:
- 4) CO_2 մոլեկուլում կովալենտային անկյան մեծությունը մոտ 109° է:
- 5) C–C կապի երկարությունը «միակի կապ–կրկնակի կապ–եռակի կապ» շարքում աճում է:
- 6) H_2O , BeCl_2 և NH_3 մոլեկուլներից գծային կառուցվածք ունի միայն BeCl_2 -ը:

Բ մակարդակ

46 Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի ելանյութերը և վերջանյութերը.

Ելանյութեր	Վերջանյութեր
ա) CH_3NH_2 և O_2	1) $\text{NH}_2\text{CH}_2\text{COONa}$, H_2O
բ) $\text{C}_6\text{H}_5\text{NO}_2$ և H_2	2) $\text{C}_6\text{H}_5\text{NH}_2$, H_2O
գ) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOH}$ և NaOH	3) CO , H_2O , NO
դ) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOH}$ և CH_3OH	4) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOCH}_3$, H_2O
	5) CO_2 , H_2O , N_2
	6) $\text{NH}_2\text{CH}_2\text{COOC}_2\text{H}_5$, H_2O

47 Երկաթի և պղնձի 17,76 գ խառնուրդի քլորացման համար պահանջվել է 8,736 լ (ն. պ.) քլոր: Ի՞նչ զանգվածով (գ) 78,4 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթ կպահանջվի նշված քանակությամբ խառնուրդի հետ սենյակային ջերմաստիճանում փոխազդելու համար:

(48-49) Ջրածնի և ազոտի 3 : 1 մոլային հարաբերությամբ խառնուրդը կատալիզորդի առկայությամբ փոխազդեցության մեջ դնելիս ստացվել է նոր խառնուրդ, որի խտությունն ըստ հելիումի 2,5 է:

48 Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ամոնիակ կստացվի, եթե սկզբնական խառնուրդը 50 մոլ ազոտ է պարունակում:

49 Որքա՞ն է ամոնիակի ստացման ռեակցիայի ելքը (%):

(50-51) Որոշակի զանգվածով երկտարր աղը լուծել են 371 գ ջրում: Մտացված լուծույթում հայտնաբերվել են $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6$ էլեկտրոնային բանաձևն ունեցող $2,408 \cdot 10^{24}$ թվով միալիցք իոններ՝ կատիոններ և անիոններ:

50 Որքա՞ն է լուծված աղի զանգվածը (գ):

51 Որքա՞ն է կատիոնի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

(52-53) Նատրիումի քլորիդի, կալցիումի կարբոնատի և նատրիումի հիդրոկարբոնատի 13,07 գ զանգվածով խառնուրդի նմուշը լուծել են ջրում: Մնացել է չլուծված 3,5 գ նստվածք: Ելային խառնուրդի նույն զանգվածով մեկ այլ նմուշ մինչև 1000°C շիկացնելիս զանգվածը նվազել է 4,64 գրամով:

52 Որքա՞ն է թթու աղի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:

53 Ի՞նչ զանգվածով (մգ) արծաթի իոններ կպահանջվեն ելային խառնուրդում պարունակվող քլորիդ իոնների հետ փոխազդելու համար:

(54-55) Մեկ թթվի մնացորդ պարունակող պինդ ճարպի 29,22 գ նմուշը տաքացման պայմաններում մշակել են 25 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 33,6 գ լուծույթով: Ալկալու ավելցուկի չեզոքացման համար պահանջվել է 12 % զանգվածային բաժնով 14,6 մլ աղաթթու ($\rho = 1,25$ գ/մլ):

54 Որքա՞ն է ճարպի մոլային զանգվածը (գ/մոլ):

55 Քանի՞ մեթիլենային խումբ է առկա ճարպի մեկ մոլեկուլում:

(56-57) Փակ անոթում պայթեցրել են ջրածին, ազոտ և ավելցուկով վերցրած թթվածին պարունակող 102 մլ ծավալով գազային խառնուրդ: Համակարգը սկզբնական պայմանների բերելուց և ջրային գոլորշիների խտացումից հետո մնացել է 96 մլ ծավալով գազային խառնուրդ, որի խտությունն ըստ օդի 1 է:

56 Որքա՞ն է ազոտի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

57 Որքա՞ն է սկզբնական խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

(58-60) $C_nH_{2n+1}COOC_nH_{2n+1}$ ընդհանուր բանաձևն ունեցող 30,6 գ էսթերի և նրա քանակից 2,1 անգամ մեծ քանակով նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի փոխազդեցությունից ստացված աղի զանգվածը 15 գրամով մեծ է սպիրտի զանգվածից: Հիդրոլիզից ստացված լուծույթը գոլորշացրել են, իսկ պինդ մնացորդը՝ շիկացրել մինչև հաստատուն զանգված:

58 Որքա՞ն է էսթերի մոլեկուլում ածխածնի ատոմների թիվը:

59 Որքա՞ն է շիկացնելիս անջատված գազի զանգվածը(գ):

60 Որքա՞ն է շիկացումից հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (գ):

(61-63) 25°C ջերմաստիճանի և $132,8$ կՊա ճնշման պայմաններում $55,875$ լ ծծմբաջրածինն այրել են թթվածնի ավելցուկում, իսկ այրման արգասիքներն անցկացրել նատրիումի հիդրօքսիդի 20% զանգվածային բաժնով 560 մլ լուծույթի մեջ ($\rho = 1,25$ գ/սմ³): ($R = 8,3$ Ջ/մոլ \cdot Կ, $T_0 = 273$ Կ):

61 Որքա՞ն է ծծմբաջրածնի նյութաքանակը (մոլ):

62 Որքա՞ն է վերջնական լուծույթի զանգվածը (գ):

63 Որքա՞ն է լուծույթում առաջացած փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (գ):

(64-66) Նատրիումի կարբոնատի 5 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ ջրային լուծույթում հայտնաբերվել են 12,801 գ հիդրօքսիդ իոններ:

64 Որքա՞ն է աղի I փուլի հիդրոլիզի աստիճանը (%), եթե II փուլն ընթացել է 0,4 %-ով:

65 Որքա՞ն է I փուլում գոյացած նատրիումի հիդրոկարբոնատի զանգվածը (գ):

66 Ի՞նչ ծավալով (լ) 2 մոլ/լ կոնցենտրացիայով աղաթթու կփոխազդի սկզբնական լուծույթի հետ:

(67-69) Պղնձե թիթեղը նիկելապատելու նպատակով այն ծառայել է որպես կաթոռ, և իրականացրել են նիկելի(II) սուլֆատի 62 % զանգվածային բաժնով ջրային լուծույթի էլեկտրոլիզ (իներտ անոդ): Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ թիթեղի զանգվածն ավելացել է 59 գրամով, անոդի վրա անջատվել է 2,5 մոլ գազ, իսկ աղի քանակը լուծույթում կրկնակի պակասել է:

67 Որքա՞ն է էլային լուծույթի զանգվածը (գ):

68 Որքա՞ն է էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

69 Ի՞նչ զանգվածով (գ) չոր կալիումի հիդրօքսիդ պետք է ավելացնել մնացած լուծույթին՝ հնարավոր բոլոր ռեակցիաներն իրականացնելու նպատակով:

Նատրիումի քլորիդի 40, 95 գ նմուշը լուծել են 280, 95 գ ջրում և ստացված լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներ): Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ անոդի վրա անջատված գազի զանգվածը 20,7 գրամով մեծ է եղել կաթոդի վրա անջատված գազի զանգվածից: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ.

- 1) Անոդի վրա անջատված գազի քանակը 400 մմոլ է:
- 2) Նատրիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում 8 % է:
- 3) Կաթոդի վրա անջատված գազի զանգվածը 0,3 գ է:
- 4) Նատրիումի քլորիդի զանգվածային բաժինը էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում 6 % է:
- 5) Եթե էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթին 0,2 մոլ ցինկի քլորիդ ավելացնեն, կանջատվի 9,9 գ նստվածք:
- 6) Եթե էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթին 0,7 մոլ պղնձի(II) սուլֆատ ավելացնեն, կանջատվի 29,4 գ նստվածք: